# ԿՈՄԻՏԱՍ



# ՄԱՆԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԳԵՐ



145

Երևան - 2014

# ԿՈՄԻՏԱՍ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԳԵՐ

ԵՐԵՎԱՆ
ԱՍՏՂԻԿ ԳՐԱՏՈՒՆ
2014

ՀՏԴ 783:784
ԳՄԴ 85.314
Կ 685

Կազմող և մասնագետ խմբագիր՝

**Դ.Գ. Ղազարյան**

**Ժողովածուն երաշխավորված է տպագրության**
**Հայաստանի երաժշտական ընկերության կողմից**

**Շնորհակալություն ենք հայտնում ՀՀ մշակույթի նախարարությանը**
**ժողովածուի հրատարակմանն աջակցելու համար**

**Կոմիտաս**
Կ 685 **Մանկական խմբերգեր** / Կոմիտաս.- Եր.: Աստղիկ գրատուն, 2014.- 36 էջ:

ՀՏԴ 783:784
ԳՄԴ 85.314

ISMN 979-0-69380-048-3
ISBN 978-9939-840-77-2

© «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, 2014
© Ղազարյան Դ., 2014



ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԵԾՆ ԿՈՄԻՏԱՍԻ

ԾՆՆԴՅԱՆ 145-ԱՄՅԱԿԻՆ

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Բազմաշերտ է մեր ժողովրդի երաժշտական մշակույթը իր զարգացման տարբեր փուլերում: Հայ երգչախմբային արվեստը, որ սկիզբ է առել անհամեմատ ավելի ուշ շրջանում, սերտորեն կապված է մեր ժողովրդի ընդհանուր և առանձնապես երաժշտական մշակույթի հետ և բխում է նրանից: Ոչ մի գիրք, ոչ մի կտավ չեն կարող արտահայտել մեր ազգային նկարագիրն այնքան հարազատորեն և այնպես ճիշտ, ինչպես անում են այն զարմանալի երգերը, որ մի բառով կոչվում է կոմիտասյան:

Հայ երաժշտական արվեստի պատմության մեջ Կոմիտասը երևույթ էր: Նա իր երգերի մեջ գծագրվում է մեր անցյալ ճանապարհը՝ գողթան մեղեդիներից մինչև քրիստոնեություն, 5-րդ դարի սահակ-մեսրոպյան նորաստեղծ շարականներից, մինչև նարեկյան մեր անզուգական հոգևոր գանձերն ու տաղերը: Հազարամյակներ ապրող մեր ժողովրդի մեղեդիացած պատմությունը, նրա անցյալ ճանապարհի կենսափիլիսոփայությունը, անսպառ հարստությունն ու հմայքը, ուժն ու էությունն ունեն կոմիտասյան երգերը: Կոմպոզիտոր և ազգագրագետ, գիտնական և երգիչ, խմբավար և մանկավարժ՝ նա իր բազմակողմանի գործունեությամբ հսկայական դեր խաղաց մեր ժողովրդի մշակույթի գրեթե բոլոր ոլորտների զարգացման գործում:

Փարիզի «Անահիտ» հանդեսում տպագրված հոդվածներից մեկում Կոմիտասը գրում է. «Բազմաձայն երաժշտությունը ոչ թե կանոնական ձայների ծեփ է, այլ արվեստագործություն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ստեղծել բազմաձայնություն, հայրենի հարկի ոճ ու ոգի, ապա հետո ընդհանրացման մասին մտածել, որովհետև երաժշտությունն էլ, լեզվի պես, ունի իր քերականական օրենքները, որոնք կանոնական են բոլոր ազգերի համար»:

Հայ մեծ երաժշտագետը, լինելով նաև մեծ մանկավարժ, մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում դպրոցականների գեղարվեստական դաստիարակության հարցերը: Կոմիտասի գրավոր ժառանգության ուսումնասիրություններից երևում է, որ այդ գործում ամենակարևոր դերը նա հատկացրել է ժողովրդական երաժշտությանը և իր ձայնագրած ու մշակած հայ ժողովրդական երգերի մի մասը պարզ ներդաշնակել է հատկապես մանկական երգչախմբերի համար: Իր այդ դաշնակումները Կոմիտասը բազմիցս կատարել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի երգչախմբում, դասարանական երգեցողության ժամանակ, ինչպես նաև՝ Պոլսի դպրոցներում: Եվ ավելին, նույն երգերը, որպես դասարանական երգեցողության նյութ, Կոմիտասը տրամադրել է հայ խմբավար, երաժիշտ ուսուցիչների, որոնք և օգտագործել են իրենց պրակտիկ աշխատանքում, մանկական երգչախմբերի հետ աշխատելու ժամանակ:

Մանկական խմբերգերի սույն ժողովածուն նվիրվում է Կոմիտասի ծննդյան 145-ամյակին։

Այս ժողովածուի միջոցով, ցանկացել ենք մանկական երգչախմբերին, աշակերտությանը, ինչպես նաև երաժիշտ-մանկավարժ խմբավարներին ծանոթացնել նաև Կոմիտասի պոեզիային։

Հանճարեղ երգաստեղծ Կոմիտասը հեղինակ է նաև մի քանի տասնյակ բանաստեղծությունների։ Դրանք նրա կենդանության օրոք չեն տպագրվել, պարզապես հեղինակն իրեն չի համարել կոչումնավոր բանաստեղծ և գրել է ինքն իր համար։

Կոմիտաս-բանաստեղծը մեզ նվիրական ու ծանոթ նույն անունն է, մարդ՝ ով տվյալ դեպքում ոչ թե երգում է, այլ խոսում է մեզ հետ։ Խոսում է ծառերի ու ծաղիկների հետ իր խոհերի մասին՝ բնության, կյանքի գեղեցկությունների, մարդկային կարոտի, երազանքների, ջերմության և վերջապես խոսում է Տիրոջ հետ, և այն ամենի մասին, որ կարող է խոսել մարդը, երբ մնում է ինքն իր հետ։

Կարծում ենք, որ ուսանելի կլինի ծանոթանալ և ըմբոշխնել Կոմիտասի քերթվածքները, որոնք փոքրիկ ժողովածուով առաջին անգամ հրապարակվել են Մեծն Կոմիտասի ծննդյան 100-ամյակի օրերին։

Երգչախմբային արվեստը ժամանակի կենդանի պարտադրությունն է, այն պատմություն և ժողովրդի ձայնն է, որն արտացոլում է ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը, նրա հոգևոր կյանքը։ Կոմիտասը հանճարեղ արվեստագետի և գիտնականի խորաթափանցությամբ ընդունեց բազմաձայնության նշանակությունը հայ ազգային երաժշտության զարգացման մեջ, և իրավամբ համարվում է հայ բազմաձայն երաժշտական արվեստի հիմնադիրը։

Դավիթ Ղազարյան

# ՀԱ՛ՅՐ ՄԵՐ

Խոսք՝ Կոմիտասի




Հա՛յր մեր,
Տո՛ւր մեզ, տո՛ւր Քո շընորհ,
Լիուլի, ամեն օր.
Հա՛յր մեր,
Կյա՛նք տո՛ւր մեր մայրիկին,
Կյա՛նք տուր մեր հայրիկին,
Հա՛յր մեր,
Մեզ պահե՛ Քո Աչով,
Մեզ օրհնե՛ Սուրբ Խաչով,
Հա՛յր մեր,
Դո՛ւ պահապան մեր...

[Գրված է Մեծ Եղեռնի օրերին]

# Ո՜Վ ՄԵԾԱՍՔԱՆՉ ԴՈՒ ԼԵԶՈՒ





13
scorrevole e cresc
con alterezza
marcando e pensieroso
scorrevole e cresc
con tenerezza
con fermando
Սրտակոչ
Di cuore
17
scorrevote, splendido e con fuoco
scorrevote, splendido e con fuoco
allegramente
21
sublime e con piena passione
sublime e con piena passione
sublime e splendido

# ԵՍ ԼՍԵՑԻ ՄԻ ԱՆՈՒՇ ՁԱՅՆ




Ես լըսեցի մի անուշ ձայն.
Իմ ծերացած մոր մոտ էր,
Փայլեց նշույլ ուրախության,
Բայց ափսո՜ս, որ երազ էր:

Եվ մեղեդին տխուր, մայրենի
Հիշեց մանկության օրեր,
Մորըս համբույրն ես ըզգացի,
Ա՜խ, ափսո՜ս, որ երազ էր:

Կարկաչահոս աղբյուրն այնտեղ
Թավալում էր մարգարիտ.-
Նա հըստակ էր որպես բյուրեղ,
Այն երա՜զ էր ցնորամիտ:

Կըրծքին սեղմեց կարոտագին,
Աչքերս սրբեց - շատ թաց էր,-
Բայց արտասուքս գնում էին...
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր...

# ԱԽ, ՄԱՐԱԼ ՋԱՆ




Ախ, մարալ ջան,
Կոկոնս թոռմած մնաց,
Ջան, գյարալ ջան,
Սիրտս կրակած մնաց:

Ախ, մարալ ջան,
Ինչ անեմ իմ ապրելը,
Ջան, գյարալ ջան,
Իմ աչքերը բաց մնաց:

# ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼ

*Վասն աղջնակների երգչախմբի*




17
Հռիփ-սի - մե մեծ խոր - հուրդ եւ ա - նուն ցան - կա - լի,
Հռիփ-սի - մե մեծ խոր - հուրդ եւ ա - նուն ցան - կա - լի,
Հռիփ-սի - մե մեծ խոր - հուրդ եւ ա - նուն ցան - կա - լի,
21
ըն-ծայ - եալ ի յերկ - րի եւ դաս - եալ ընդ հրեշ-տակս,
ըն-ծայ - եալ ի յերկ - րի եւ դաս - եալ ընդ հրեշ-տակս,
ըն-ծայ - եալ ի յերկ - րի եւ դաս - եալ ընդ հրեշ-տակս,
25
ե - ղեր օ - րի - նակ սըր - բու - թեան կու - սա - նաց
ե - ղեր օ - րի - նակ սըր - բու - թեան կու - սա - նաց
ե - ղեր օ - րի - նակ սըր - բու - թեան կու - սա - նաց
29
վար - դա - պե - տու - թիւն ա - ռանց ար - դա - րոց:
վար - դա - պե - տու - թիւն ա - ռանց ար - դա - րոց:
վար - դա - պե - տու - թիւն ա - ռանց ար - դա - րոց:

# ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ




Հոտաղ եզներ կարածա,
Մանկալ պառկեր՝ քունն անուշ:

Դաշտեր ծորեր մնչեր են,
Ջրեր զլզլան՝ ձենն անուշ:

Հավքեր քռան իրենց բուն,
Բլբուլի տաղն էր անուշ:

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԱՍՏՎԱԾ ԻՄ

Սիրո սերմը ցանեցիր,
Հրո ջերմը պարտեցիր,
Հողին շունչդ փչելով
Հոգի կյանքդ կաթեցիր:

Եվ Արևդ լուսին մարմնես մաղեցավ,
Եվ իմ հոգին Հոգուդ ցողով շաղեցավ,
Իմ սրտիկի սերն ու բույրը, սիրո խույը՝
Ամպերի մեջ, որպես կայծակ սահեցավ:

## ԱՂԵՐՍ

Կա՛ց, Տե՛ր, Տե՛ր իմ,
Բա՛ց, Տե՛ր, սե՛ր իմ,
Զարկին դռներ
Իմ թևեր,
Տո՛ւր, Տեր
Հո՛ւր, Տեր,
Որպես խոցեր
Էլ չդողան
Իմ ոտեր...:

## ԱՂՈԹՔ

Վա՛րդ, դու կարծե կարմիր ոգիդ,
Ճերմակ շուշան՝ սիրտ ու հոգիդ.
Մանուշա՛կ
Անուշակ՝
Գուրգուրե
Ու բուրե:
Տո՛ւր, սուսանիկ՝ ոսկի արև,
Հո՛ւյս անթառամ կյանք հարատև:
Օրե օր
Նորե նոր
Հար գարուն
Զարդարուն:

## ԿՈՒՅՐԸ

Տե՛ր իմ,
Սե՛ր իմ.
Զարկին Քաջեր՝
Կուրացուցին իմ աչքեր.
Լո՛ւյս տուր.
Հո՛ւյս տուր.
Ասա՞ նայե՞
Իմ աչերուն խնայե:

# ԱՀԱ ԾԱԳԵՑ ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ

Հանդարտ, թեթև, հարմար
**Andante commodo** ♩= 56







Ահա ծագեց կարմիր արև,
Տաք ու պայծառ է օրը,
Դեհ, քաշեցեք, սիրուն եզներ,
Առաջ տարեք արորը:

Վարը վարենք, ակոս փորենք,
Խոր ակոսներ հողի մեջ,
Սերմը ցանենք, որ հունձ հընձենք,
Ցորեն դիզենք կալի մեջ:

Կըգա ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը,
Ուտելու միշտ պաշար ունինք,
Լի և կուշտ է մեր փորը:

# ԽՈՒՄԱՐ




Անուշ քընե երես բաց,
Հոպ, հոպ, հոպ պըտա դըմբա,
Սահակն եկավ՝ խելք գընաց,
Հե՜յ, հե՜յ, լավն է,
Հե՜յ, հե՜յ, լավն է:

Հաջընց կալը բոլոր պար,
Խումար մեջը կխաղար:

Գարնան բացվեց նոր լալա,
Խումար բերեց զույգ բալա:

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ




21
cresc.
հարկ էր ինձ այլ - ազ - գի լեզ-վով իմ միտ - քը հայտ-նել օ -
cresc.
հարկ էր ինձ այլ - ազ - գի լեզ-վով իմ միտ - քը հայտ-նել օ -
24
f
տար բա - ռե-րով, որ ձայն ող - ջու-նի բը - նավ իսկ չեն ինձ
f
տար բա - ռե-րով, որ ձայն ող - ջու-նի բը - նավ իսկ չեն ինձ
28
mf
f
Գե - ղե-ցիկ լե-զու հրա-շա-լի լե-զու այդ ինչ - պես քաղ-ցըր հըն-չում ես ինձ դու
mf
f
Գե - ղե-ցիկ լե-զու հրա-շա-լի լե-զու այդ ինչ - պես քաղ-ցըր հըն-չում ես ինձ դու
32
p
mf
կար-միր ա - վե-լի բաց ծա-նո - թա-նալ քո ճոխ գան-ձե-րին հո-գով հա-յա-նալ
p
mf
կար-միր ա - վե-լի բաց ծա-նո - թա-նալ քո ճոխ գան-ձե-րին հո-գով հա-յա-նալ
36
p
cresc.
ա - սես թե ա - հա խոր գե - րեզ - մա - նից պա - պերն ու հայ-րեր կան-
p
cresc.
ա - սես թե ա - հա խոր գե - րեզ - մա - նից պա - պերն ու հայ-րեր կան-




Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ, ընտանի իմ հոգու համար,
Առաջին դու խոսք ականջիս հասած,
Դու սիրո քաղցրիկ առաջին հոդած
Մանկական լեզվիս թոթովանք տըկար,
Հընչում ես իմ մեջ դու միշտ անդադար:

Ոh, ինչպես պըղտոր էր սրտիս օրը,
Երբ պանդուխտ էի օտարի տանը,
Եթե հարկ էր ինձ այլազգի լեզվով
Իմ միտքը հայտնել օտար բառերով,
Որ ձայն ողջույնի ըրնավ իսկ չեն ինձ:

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպես քաղցրր հնչում ես ինձ դու,
Կամիմ ավելի քաջ ծանոթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,
Ասես թե, ահա, խոր գերեզմանից
Պապերն ու հայրեր կանչում էին ինձ:

Հընչիր դու, հընչիր այժմ և հավիտյան,
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Բարձրացիր արի հընության փոշուց,
Դու հայ իմ լեզու մոռացված վաղուց,
Որ սիրտ ամենայն վառի քո սիրով:

# ԷՍ ԱՌՈՒՆ ՋՈՒՐ Է ԳԱԼԻՍ




Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել շաղերով,
Հեյ ջան, գալիս է սեյր անե:

Արի իմ ազնիվ ընկեր,
Առաջ գամ քեզ տաղերով:
Հեյ ջան, գալիս է սեյր անե:

# ԾԱՂԻԿՆ ՈՒ ՇԱՂԻԿ

Եկ, շաղի՛կ, եկ.
Եկ՝ առավոտն առավոտ.
Չելնե՞ արև տաքուկ ու ծարավուկ՝
Լզե մեր պագուկ:

Գա՛մ, ծաղի՛կ, գա՛մ.
Գա՛մ այգուն - այգուն
Ու քեզ շաղ տամ:

Դեռ չելած արև խայտուն ու ցայտուն՝
Շաղիկ - շաղիկ թռավ արփիկն ու հոգին՝
Ծաղիկի ծարավ գոգին՝
Ու գունագեղ թուշիկ
Շա՛ղ դառավ հուշիկ - հուշիկ:

***

Գարուն ցելավ ծաղկունիկ քողերով,
Ամառն էլավ հասկունիկ ծոցերով.
Աշունն առավ խաղողիկ քարերով,
Ձմեռն պապավ պապուղիկ սառերով:

***

Էլավ գետև՝ երև - երև կանաչ ծովանի,
Տարփուն - փարփուն կապույտ հովանի,
Ժպիր քողով արփիկ հովին ծռած,
Ծպիր դողով արիկ քովին դրած:

# ԹԵՐԹԻԿՆ ՈՒ ՑՈՂԻԿ

Գարուն - թերթիկն ընկել էր ծալուկ՝
Խոտերի մեջ դալուկ.
Աշուն - ցողիկն իջել էր վրան՝
Հողմերի հետ երան:

# ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Անուշ գարուն,
Ծաղիկ, բողբոջ,
Զվարթ առուն,
Կայտառ խոխոջ,
Կանաչ դալար,
Ծիծաղ ցողիկ,
Վրակ դալար,
Դուք ո՞ւր թռիք:

# ԱՊԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա



# ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ

տարբերակ Ա

Աշխույժ, սիրալիր
**Allegretto amabile** ♩= 100




տարբերակ Բ

Աշխույժ, սիրալիր
**Allegretto amabile** ♩= 100




Հըրես եկավ իմ աղբեր,
Ալ ծին տակին խաղալեն:

Խալիչեքը փըռել եմ,
Նախշուն բարձեր դըրել եմ:

# ԿԱԼԵՐԳ

Եռանդուն, ազատ, իմպրովիզացիոն
**Energico, commodo**




1. Ոտիդ արա, Ծիրան ջան, ման արի:
2. Ցորենը ինձ, Տոկան ջան, ման արի:
3. Դարմանը քեզ, Ծաղիկ ջան, ման արի:

## ԱՇՈՒՆ ՕՐ

Սեվուկ ամպեր վար եկան
Օրան, օրան,
Սարի վրա շար եկան:
Ծածկեց առավոր,
Դարձեց, սառավ օդ:

Գոռաց երկինք, բուք արավ,
Հեվաց, հեվաց,
Ծերուկ երկիր սուգ արավ:
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր դողաց - քա՛մբ:

Բոզբոզ արեվ շող կապեց,
Դողաց, սողաց,
Արյուն - ամպից քող կապեց:
Վառեց լեռան լանջ,
Լեռան տավապանջ:

Տեղաց անձրեվ մաղ տալով,
Մարմանդ - մարմանդ,
Հոգնած՝ տերեվ շաղ տալով:

Երկիր քուն դրավ,
Եվ թռչուն թռավ:

Հուզված առուն փախս տվավ
Սողուն - սողուն,
Ձորում մշուշ կախս տվավ:
Քամին ելավ վեր,
Արավ պարուբեր:

Մոխիր ամպեր ժիր եկան
Դալուկ - դալուկ,
Սարի վրա ցիր եկան:
Հալեց աշուն օր
Կյանքիս սեվավոր:

## ԱՇՈՒՆ-ԳԻՇԵՐ

Ձյունիկ լուսին
Սարի ուսին,
Դեղին - կարմիր շաղալեն
Ալիք - ալիք խաղալեն,
Ծովի ծոցեն՝
Ալ ժապավեն
Տվել բոցին:
Ծառեր, հողմեր,
Ամեն կողմեր,
Թռչուն դառել երգելով,
Հեռու - հեռու հերկելով,
Երան - երան
Թռչելով
Օդի վրան:

## ԱՇՈՒՆ

Ծառեր, թփեր լեցուն միրգ,
Մառան տարան գիրկ ու գիրկ,
Աշուն սնավ:

Սաղարթ - սաղարթ սարսելով,
Ոսկի տերեվ դարսելով,
Աշուն քնավ:

Տարափ ու բուք փչելով,
Վայուն - մայուն ճչելով
Աշուն ծնավ:

# ՋԱՆ ԳԱՌՆՈՒԿ



Աշխույժ, սիրալիր
Allegretto amabile ♩= 100
I
II
Կա - պեմ վը - զիդ զըն գ - զան - գակ. դե՛, հե՛,
Գաշ - տը բո - լոր կա - նաչ խոտ.
meno f
զը՛ն-գը, զը՛ն-գը, դե՛, հե՛, ջա՛ն, Օ - րը տաք է, ա - րե - գակ.
Ա - րի տա - նեմ քեզ ա - րոտ.
դե՛, հե՛, զը՛ն-գը զը՛ն-գը ջա՛ն գառ - նուկ:
Fine
Ջուր կու - զա վե - րին սա - րեն, սառն օ - րը - րե - լեն,
կը - րակ - վի մար - մար քա - րեն, կար - կար ծո - րե - լեն:
D.C. al Fine
senza repetizione

# ՍԱՐ-ՍԱՐ




Սար, սար,
Բաղի դռնից դուրս եկա,
Ջան, ջան,
Արևի պես լուս եկա:

Սար, սար,
Էն սարին սար չեմ ասի,
Ջան, ջան,
Վատ մարդուն ջան չե՛մ ասի:

Սար, սար,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջան, ջան,
Ես Լևոնի քույրիկն եմ:

# ԷՍՕՐ ՈՒՐԲԱԹ Է




Էս օր ուրբաթ է, պաս է,
Դե՜, հե՜, զը՛նգը, զը՛նգը,
դե՜, հե՜, ջա՜ն:
Սըրտիկ արծաթե թաս է:
Դե՜, հե՜, զը՛նգը, զը՛նգը,
դե՜, հե՜, ջա՜ն:
Սըրտի՛կ, մամուլ մի մընա,
Դե՜, հե՜, զը՛նգը, զը՛նգը,
դե՜, հե՜, ջա՜ն:
Աշխարհի մարդու չի մընա:
Դե՜, հե՜, զը՛նգը, զը՛նգը,
դե՜, հե՜, ջա՜ն:

Աշունն եկավ ցողալեն,
Ծառի թըփեր դողալեն.
Սըրտի՛կ, մալուլ մի՛ մընա,
Աշխարհի մարդու չի՛ մընա:

Կռունկ կանչեց սարերում,
Ղարիբ տըղեն երերում.
Սըրտի՛կ, մալուլ մի՛ մընա,
Աշխարհի մարդու չի՛ մընա:

Ելել եմ ու ճար չունիմ,
Մեռնելու հընար չունիմ.
Սըրտի՛կ, մալուլ մի՛ մընա
Աշխարհի մարդու չի՛ մընա:

## ԲՈՒՆԸ՝ ԲԱՐԻՆ

Բունը՝ բարին
Բարի՜կ - բարին՝
Տունչ - պարարին.
Ինչ ու ինչպե՞ս
Տնիկ - փնիկ
Բայծածնիկ
Զալարում ես
Ոզի - ոզի նկազելով,
Պահիկ - պահիկ հավաքելո՞վ:

Բարը՝ ծաղկին
Ծաղի՜կ - փիրուն՝
Երկրի՛ սիրուն.
Էդ ինչ ու ինչ
Թերթիկ ունես՝
Կարմիր - ձուն ես.
Ու լարում ես.
Բոլոր - մոլոր ես թշերով,
Ոլորվելով սեր նշերո՞վ:

Ծաղիկը՝ փերթեկին
Տերե՜վ - փերեվ,
Գլխավերեվ,
Էդ ինչ ու ինչ
Առակ - առակ՝
Կանաչ - կարագ
Նկարում ես.
Քու մարիկներ հեղուն - բեղուն
Ու պարիկներ եղուն - մեղո՞ւն:

Բոլորն՝ իրար
Միանալո՞վ
Հիանալով:

## ԲՈՒՍԱԲԱՐԵՎ

Սնունդը՝ ծառին
Ծառի՜կ, ծառի՜կ,
Տունչդ անառիկ,
Ինչ ու ինչպե՞ս՝
Անզուր անլուր,
Քո քուռ ու կուռ
Դալարում ես
Դեպի երկին փռելով,
Ու ճուղերդ զրելո՞վ:

Ծառն՝ արմատին
Բունի՜կ - բունիկ՝
Կարճերունիկ.
Ինչ ու ինչպե՞ս՝
Քո երակներ
Լուսա ակեր
Դալարում ես
Եռուն - եռուն կրակելով,
Հեռուն - հեռուն ծրագելո՞վ:

## ԴԱՑՐԱՆՔ

Հոգիս թիթեռ
Մի վայր, մի վեր
Հույս ծովերով թևելով
Հոգիս մի բեռ
Անմայր անտեր,
Լույս հովերով հեվելով ...

# ԱԼԱԳՅԱԶ

**Լուսավոր, ջինջ**
**Clara voce** ♩ = 68



# ԽՆԿԻ ԾԱՌ




Մեր դըռանը խընկի ծառ,
Գյուլը՛ւմ ջան,
Ձեր դըռանը խընկի ծառ.
Գյուլը՛ւմ ջան,
Խընկենին ա բերել բար,
Գյուլը՛ւմ ջան
Իմ խորոտիկ, պըզտիկ յար:
Գյուլը՛ւմ ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրեն քառ.
Երքար ու գար, շորոր տար,
Սիրուն յարին օրոր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրեն քառ.
Գընար ու գար շըվին տար,
Անուշ յարին քնին տար:

Մեր դըռանը խընկի ծառ.
Ոսկի բըլբուլ վըրեն քառ.
Կարմիր խընձոր աներ տար,
Ալվան ծաղիկ տանել տար:

## ՃԱՆԱՊԱՐՀ

Բարակ ուղին ողղալով,
Ոլրի փակերին դողալով,
Ճամփի ծայրին քնել է
Կյանքի ծառը շողալով:
Ի՜նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհն Անհունի...
Մարդու, բույսի, գազանի
Եվ թևավոր թռչունի:

## ՀՈՎ - ՍԵՐ

Նուրբ հովի պես լարերով
Սուրբ ծովի պես պարելով,
Սերըդ սրտում պահեցիր,
Սիրտս խորքում զահեցիր:
Աշունն եկավ ծառին, սարին հեկեկելով
Անձրեվ թելեր փոշի - փոշի թելելով,
Դրուկը ճղի՝ առին փարին
Տերևները կանաչ - կանաչ պեղելով:

## ՓՇՈՒՐ ՄԸ

Սրբի՛ր խորը,
Գրկիր նորը,
Վանե՛ հինը,
Բանե՛ մինը:

## ՍԻՐԱՀԱՍԿ

Ո՞վ է փնտրել ծովի ծավալ
Հովի թավալ.
Կամ արտերում հասկի փալիք
Ոսկի ալիք:

## ՈՒՌԻ ՑՈՂ

- Մայրի՛կ, մայրի՛կ,
Մեր ուռենին ինչ է լալիս առվի ափին:

- Հայրի՛կ, հայրի՛կ,
Իր ճյուղերեն ցող է թալիս կանաչ փափին:

***

Ես սրտերի անփուշ վարդ,
Տեսա ճերմակ, անփուշ վարդ,
Կրծքիս վրա դրի վարդ,
Հորդորեցի, քույր չունեներ,
Սիրտս մնաց բարդ ի բարդ:

Տեսա կարմիր փշոտ վարդ,
Ավա՜ղ ձեռքս ծակոտեց,
Արյուն հոսի վարդեն ցարդ,
Բույրը մնաց քծքես ներս:

## ԻԲՐ ԶԱՐԴ

Օրն օր
Ծրագ առ,
Դահն վառ՝
Սփքիդ յար
Լուսավոր,
Նորեն նոր
Կըրակ փար
Անդադար՝
Սրտիդ լար
Հուսավոր:

# ՍՈՆԱ ՅԱՐ


Քայլերգի տեմպով
Tempo di marcia ♩= 100
Fine
I
II
III
Սո՛-նա յա՛ր. Սո՛-նա յա՛ր. Սո՛-նա սի-րուն. Սո՛-նա յա՛ր:
Սո՛-նա Սո՛-նա. Սո՛-նա յա՛ր Սո՛-նա սի-րուն Սո՛-նա յա՛ր:
5
Solo
scerzando
Tutti
Վար-դա-վա-ռը գա-լիս ա.
Այ գյու-լում կան-չող աղ-ջիկ,
9
D.C. al Fine
ծա-ղի-կը ցըն-ծա-լիս ա
ձե-նըդ ծըղ-վը-լա-լիս ա

# ԳՆԱՑԵՔ ՏԵՍԵՔ Ո՞Վ Է ԿԵՐԵԼ ԱՅԾԸ




Գնացեք տեսեք ո՞վ էկերել այծը.  
Գնացին տեսան գայլն է կերել այծը:  
Գայլն ու այծը,  
Այծն ու գայլը,  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:  
Գնացեք տեսեք ո՞վ է կերել գայլը.  
Գնացին տեսան արջն է կերել գայլը:  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը,  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:  
Գնացեք տեսեք ո՞վ էկերել արջը.  
Գնացին տեսան թուրն է կերել արջը:  
Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը,  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:

Գնացեք տեսեք ո՞վ է կերել թուրը.  
Գնացին տեսան ժանգն է կերել թուրը:  
Ժանգն ու թուրը,  
Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը,  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:  
Գնացեք տեսեք ո՞վ է կերել ժանգը.  
Գնացին տեսան հողն է կերել ժանգը.  
Հողն ու ժանգը,  
Ժանգն ու թուրը,  
Թուրն ու արջը,  
Արջն ու գայլը,  
Գայլն ու այծը,  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:  
Ձեզ՝ բարեկենդան,  
Մեզ՝ բարի զատիկ:

*Ծանոթություն՝ Ա և Բ տակտերը հետագա տներում խոսքերին համապատասխան փոխաջորդելով կրկնվում և աստիճանաբար արագացվում են:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .......... 4
ՀԱ՛ՅՐ ՄԵՐ .......... 6
Ո՜Վ ՄԵԾԱՍՔԱՆՉ ԴՈՒ ԼԵԶՈՒ .......... 7
ԵՍ ԼՍԵՑԻ ՄԻ ԱՆՈՒՇ ՁԱՅՆ .......... 9
ԱԽ, ՄԱՐԱԼ ՋԱՆ .......... 10
ԱՆՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԱԼ .......... 11
ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ .......... 13
ԱՀԱ ԾԱԳԵՑ ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ .......... 15
ԽՈՒՄԱՐ .......... 16
ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ .......... 17
ԷՍ ԱՌՈՒՆ ՋՈՒՐ Է ԳԱԼԻՍ .......... 20
ԱՊԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա .......... 22
ԱՆՁՐԵՎՆ ԵԿԱՎ .......... 23
ԿԱԼԵՐԳ .......... 24
ՋԱՆ ԳԱՌՆՈՒԿ .......... 26
ՍԱՐ-ՍԱՐ .......... 27
ԷՍՕՐ ՈՒՐԲԱԹ Է .......... 28
ԱԼԱԳՅԱԶ .......... 30
ԽՆԿԻ ԾԱՌ .......... 31
ՍՈՆԱ ՅԱՐ .......... 33
ԳՆԱՑԵՔ ՏԵՍԵՔ Ո՞Վ Է ԿԵՐԵԼ ԱՅԾԸ .......... 34

*Նվիրվում է Կոմիտասի ծննդյան 145-ամյակին*

# ԿՈՄԻՏԱՍ

## ՄԱՆԿԱԿԱՆ ԽՄԲԵՐԳԵՐ

Կազմող և մասնագետ խմբագիր՝ **Դ.Գ. Ղազարյան**

Հրատ. շարվածքը՝ **Ա.Ռ. Բաբուրյանի**

**«Աստղիկ գրատուն»** հրատարակչություն

ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21
Հեռ.՝ (+374 10) 52 88 00
E-mail: info@astghik.am
www.astghik.am